

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ


ստանձին գրքով հեղինակի հետեւեալ երկերը

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ

- 1) Բանաստեղծութիւններ (սպառված)
- 2) Աշխատանքի երգեր "
- 3) Հեղափոխական երգեր Ա. և Բ հրատ. "
- 4) Նոր ստափսա (սրեմ) "
- 5) Բանաստեղծութիւններ Բ գիրք "
- 6) Հափասարութիւն (սրչեմ) "
- 7) Կարմիր ալիք (սրչեմ) "
- 8) Հեղափոխական բեմ, ժողովածու (սակավաթիվ)
- 9) Երկու սրչեմ

ԹԱՐԳՈՒՄՆՈՒԹԻԻՆՆԵՐ

- 10) Ազա - նեգրի Ա. և Բ հրատարակութ. . (սպառված)
- 11) Գլխիկոյ հնչիւններ Ա. Գեւորի (չափածոյ) "
- 12) Բանաստեղծութիւններ սրչեղիայից Ա. Գառաւիկ "
- 13) Երկու սպամվածք Մ. Գորկու "
- 14) Գեղարվեստը կեանքի համար, Ա. Լուսաշարակու



Պրոլետարների բոլոր երկրների, միացե՛ք!

ՀՐԿՈՒԲ ՀՐԿՈՒԲԵՐՆԵ



ԵՐԿՈՒԻ ՊՈՅԵՄ

18190
A 8794


I ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ԽՈՍԱՑԻՆ
II ԵՐԳԸ ՔԱՌԱԹԵՎ

ՀՐԱՏԱՐԱԿ ՎՐԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ. ՔԱՂԱՍԻՍՅԱՆ

Изд. Главполитпросвета С. С. Р. Грузии



Խ. Տ. Ի. Թ. Պալիգրաֆ բանի 5-րդ սովորանի
1923





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

(Արժանատի «ԴԱՐԲՆՈՑ» ամսագրից)





ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ԽՈՍԱՑԻՆ

(Պ Ո Յ Ե Մ)

— 0 —

Եմ երգի համար, իմ շարքի համար
Ես ձեզ եմ ընտրում, կարմիր հագարներ,
Ձեզ, վոր մանկութից կրակով անմար
Մուրճերիդ դարկը սրտիս էք զարներ...
Եվ խարտոցը ձեր հղկել, վողորկել
Փանգը ուղեղիս ազգայնամուլի,
Ծովերի խորքը քշել, ուղարկել
Եսական հոգիս կրքոտ ու մուլի.
Ես ձեր քուրայում շիկնած կրակով
Ջտել եմ, բովել մտքերս եռուն,
Ապրել, տառապել մարդկանց տանջանքով,
Սահմանափակից ճանաչել հեռուն:
Իմ երգի համար և շարքի համար
Ես քեզ եմ ընտրել, կարմիր աշխատանք,
Քեզ, վոր կարմրագգեստ, դեմքով արևառ
Հղացումների հիւսել ես լեռհանք

Եվ նորեկ կեանքի — ապագա մարդուն —
 Ստեղծագործի թողել օրինակ:
 Ախ, թեև երբեմն քո շենքերի տակ
 կարմիր գավակդ է ընկել նահատակ,
 Թեև շատերը հերոսի նման
 Ընկան ու մեռան նրանց հիմքի տակ՝
 Բայց և շատերը ելան այս տիտան
 Պայքարումից հետ — նոր Աշխարհ գտան...
 Դուք՝ արեփներդ մեր նորածեղի,
 Դուք՝ հեղինակ իմ խանդավառ երգի,
 Իմ երգի համար, իմ շենքի համար
 Ձեզ եմ պարտական գրչովս խոնար:

I

Երբ ես աչք բացի առաջին անգամ,
 Երբ ես զգացի, վոր միտքս է աճում,
 Ինչպես կոկոն վարդ — վոր չէ իմացվում —
 Ինչպես է բացվում՝
 Երբ շուրջս տեսա ես լաց ու կական,
 Վոր գետ էր կազմել վողբից հայկական՝
 Ես էլ ձուլվեցի այդ հոտանքի մեջ,
 Տարվեցի նրա թախիժով անվերջ.
 Բայց և շուտ լուեց թախիժը լացի.
 Եւ ես ասացի.
 Այս երկրում ապրող մենք ճնշվածներս —

Հարիւր ազգերից, հարիւր հիւսքերից—
 Ինչո՞վ ենք ազատ և ինչո՞վ ենք զերծ
 Ջրկանք, հարածանք կրող միւսներից.
 Կովկասարնակ զատ հառախածներս
 Ինչո՞վ բաղդաւոր ուս և եղբորներից.
 Չէ՞ ամենուրեք ցարերն են տիրում,
 Յարերը խոսում գնդակ-մարակով,
 Չէ՞ վոր ամեն տեղ մեզ նամանները
 Այրվում են մի տեղ նաման կրակով,
 Ուր ցար ու սուլթան իրենց զոռ թագով
 Ժողովուրդների բերանն են փակում,
 Ուր գործարանատեր, ոստիկան, տերաւր,
 Աշխատավորի արիւնը լակում...
 Եվ ես հասկացա, հասկացա իսկույն,
 Վոր կա՞ն աշտեղ մի անարդարութիւն,
 Կա՞ն աշտեղ մի մեծ ծանր խաչափայտ—
 Շատերին անհայտ,
 Վորի տակ հեծում, անքում է համայն
 Չարքաշ մարդկութիւն:

II

Եվ ես ձուլվեցի այն հոսանքի մեջ—
 Նրա անունը՝ սև բանվորութիւն...
 Մենք շատ ենք իրար «Չան տղեր» տակ
 Ու խանդավառովել մի խոհով վսեմ,

Մի ցավով տարվել. բաղդավորութիւն
 Մեր կեանքում սակայն երբեք չենք տեսել.
 Մեր ընկերները մեջք-մեջքի տված
 կարիքն է եղել ու մեկ էլ չոր հաց.
 Գործարանների կամարների տակ
 Մենք շատ ենք տանջվել, բայց նեցուկը մեր
 Մեկ հույսն է եղել—մեկ էլ աշխատանք.
 Երբ մեր մուրճի տակ երկաթն էր տափկում՝
 Մենք գիտեինք վոր այդ մեր տերերի
 Համառ ու դաժան քար սիրան է փափկում.
 Երբ կռանի տակ շիկնած պողպատից
 կայծեր էր ցայտում՝
 Մենք գիտեինք վոր այդ մեր սարգերի
 Ազան աչքերի արցունքն է կաթում.
 Իսկ երբ թափ-անիվն իր խենթ պտույտով
 Վողջ գործարանը հուզում, մրրկում՝
 Մենք լսվ գիտեինք, այդ մեր սրտերի
 Երակն է զարկում: \

Հույզերով վառված, հույսերով լարված
 Մենք լսվ գիտեինք, վոր պիտի իջնի
 Տիրողի գլխին մի ծանր հարված.
 Դաժան ցարերի, գիշատիչների
 Հավիտենական անեծքով այրված,
 Նրանց դադաղի կափարիչների
 Մեխերը արդեն մեր ձեռքով գամված...

Եվ խոսեց լեզուն արդար օրերի
 Հեղափոխական մարգարեների,
 Եվ գրոհ տվեց կարմիր փոթորիկ,
 Այդ հաղթ երթն էր ըմբոսա շարքերի:
 Այնտեղ փետրվարն նոր դարնան շեմքին
 Իր նեան էր ցցել,
 Եվ կրակ շնչով, վորտաի շանթով
 Երկիրը ցնցել.
 Ինչպես անդրանիկ անձրևը դարնան,
 Մարում է սապը հողի կարտաած,
 Ինչպես գետերի հեվքը խլրտած,
 Զարկում-փշրում է սառուցէ շղթան՝
 Այնպես էլ վորտան փետրվար-մարտեան
 Դարձավ շեփորը Հեղափոխութեան.
 Սակայն մենք նրան կովկասում ավեր
 Ռազիով ստացանք,
 Այն, վոր Հիւսիսից մեզ տվին նվեր՝
 Մի ցավ էր, տանջանք...
 Առանց քրտինքի ո՞վ է հնձել ցանք,
 Սաղազ, անկոխի, առանց երկունքի
 Այն ո՞վ ծնունդը տեսել մանուկի...
 Օ, դրախտ կովկաս, հմայուն Թիֆլիս, անդրաթ
 Գզված ու սիրված բոլոր ցեղերից,
 Դու զեղ Վրաստանն, նամուս - Հայաստանն,

Եվ աշխատավոր բարկ Ազրրայժան
 Հեռու տեղերից.

Յիշում էք վերջան արիւն ու տանջանք,
 Անլուր տառապանք

Ձեզ թողին բաժին Մուսաֆաթ, Գաշնակ.

Թուրքը հայու գեմ, հայը վրացու,

Ուր վրնջում էր կիրքը դրացու...

IV

Փետրվոր - մարտեան ալիքների չուն
 Հետագարձ դարկով գրոհ տվեցին,
 Վտաքի հանեցին,

Հոկտեմբերեան Մեծ Հեղափոխութիւն.

Աշխարհն իր ծնած անդրանիկ օրից

Ձեր տեսած այդպես մի գեղեցկութիւն.

Արեվը իրա լույս տալու օրից

Ձեր տված ամպին այդպիսի հմայք.

Ովկիանն ալեվոր իր վողջ տարերքում

Ձեր ապրած այդքան հուզումնալի կեանք.

Երկինքն այնպես վորոտ չէր լսած,

Կայծակը այնպես կարկուտ չէր տեսած,

Մայրաքաղաքի զինվոր թէ բանվոր,

Վորպես առիւծներ նետից վիրավոր

Քաղաքածայրի արվարձաններից,

Գործարանների մրոտ թաղերից,

Վազու՛մ ե՛ն առաջ, խե՛նթ ալիքներով,
 Սորտակու՛մ շաշու՛կ կերենակիների

Պալատները գոռ...
 Հաղթ կրոնշտաղի բանվոր, նապաստին

Շաա գոհեր սովին,
 Վոր կոմմունայի պատվանդանը խոր

Հիմնավորեին.

Վոր միանգամից սրբեն-տանեին

Հատակը ծովի,

Փթած ու նեխված դիակները դաղճ

Բուրժուաների...

Հե՛յ, ա՛յն ծով արեան ալիքները խոլ

Լայնացան, անցան իրենց ախու՛նքից,

Թա՛ն կովկասեան լերանց բարձունքից

Ու՛յժով անասան,

—Ու... մեզ էլ հասան...

V

Որոտու՛մների հեղեղն է խոսում

Օղերի միջով.

Այն ո՛ւմ արիւնն է խոխոջով հոսում,

Այն ո՛վ է կռվում կրակոտ շնչով,

Ո՛վ գարնավում, ո՛ւմ հետ...

—Կարմիր Ռուսայի գավազներն են ա՛յն,

Կռվում են ա՛յնտեղ ճերմակների հետ...

Նրանք բոլորն էլ ջահել, պատանեակ,
 Անվեհեր դեմքով, լրջմիտ ու խոհուն,
 Նրանք ամենքն էլ արեվի դավակ—
 Վե՛հ զիտակցութեան լույսը աչքերում,
 Ունին կատարել մի վսեմ, սիրուն
 Պատմական կոչում:
 Մի նոր առավոտ առավոտի պես,
 Եւ թարմ օդի պես,
 Երեվան եկան կարմիրները այն,
 Ժպիտով մանկան.
 Այն առավոտուն եթերի նման
 Խաղաղված էին դեմքերը նրանց—
 Չգված ու լարված.
 Հէյ, առիւծների ձագուկներն էին
 Կովից նոր ելած,
 Ազատիչները՝ լուսով ճաճանչված,
 Հաղթով պսակված:
 Ու մտան նրանք թիֆլիսը սիրուն,
 Թիֆլիսը ծերուկ և մշտաջահել,
 Ու ասին նրանք. ահա՛ ձեզ վայել
 Այս սիրուն երկիր, համեցե՛ք, առե՛ք,
 Ու կառավարե՛ք.
 Չե՛ղ ենք հանձնում մենք սրա բարձունքներ—
 Մեր արեամբ օծված,
 Սրա վե՛հ լեռներ, թավուտ անատուներ,
 Արնախառ քրտնով մեր սրբազործված...



Առավոտի պես և թարմ օդի պես,
Արեվի նման երեվացիր դու,
Դու, Սորհուրդների Մեծ Իշխանութիւն—
Բանվոր-գիւղացու.

Թարմ ու նորութիւն շնչեց քո հողից,
Քո շունչ ու ցողից,

Մի նոր երկրագունդ իր օրենքներով,

Մի նոր ժողովուրդ իր նոր երգերով.

Այս օրը արդեն երեկվա չէ օր,

Մենք գնաս բարով վաղուց ենք ասել

երեկվա օրին,

երեկվա օրից—այսօրին հասել.

Առավոտի պես և թարմ օդի պես,

Արեվի նման երեվացիր դու,

Դու, Սորհուրդների Մեծ Իշխանութիւն—

Բանվոր-գիւղացու:

VI

Եվ առաջ անցան Ստեղծողները,

Վոր բանտերի մեջ էին մեծացել.

Ահա և նրանք—նոր Աստվածները—

Օ, քանի, քանի փշեր են անցել...

Կովկասի շքեղ վայրերին փարթամ
 նրանք այժմ տեր — այլ և տիրական —
 Եւ միայն այսքան.

Մեր շար թշնամին նահանջի ժամին,
 Վոր հեղեղի զլես սրբել էր անցել՝
 Ուր վողջ երկիրը առատ, բարգավաճ,
 Ալան-թալանի մոխիր էր դարձել՝
 Աստվածները այն արդար ցասումի
 Ե՛վ խոցվել էին և՛ խիստ բարկացել:
 Ինչպես տարերքը քառսի միջից
 Լույս պոռաց հանկարծ ու ճաճանչեց լույս,
 Ինչպես Ստեղծողն արեվին, հողին,
 Ծնչեց ջերմութիւն,

Ե՛վ կեանք ստացան կանաչ, ծառ ու բույս՝
 Այնպես էլ մարդը հասկացավ խակույն,
 Որ իր երկրի տերն ինքն է միայն —
 Ու ինքը միայն.

Հազար-հազարով ծառս ու ծառս ելան
 Աստվածներն այն,

Ե՛վ խոսեց վլաժ, ավեր մեքենան,
 Ե՛վ բեհեզ հազավ երկիրը խոսպան.
 Հազար-հազարով իրարու անցան
 Աստվածներն այն,

Վորը սղոցը, վորը բահ ու թին,
 Վորը խարտոցը, մուրճ-մանգաղ ձեռքին,

Ավեր վայրերին շնչեցին վոզին

Շինարարութեան.

Ջրերին՝ ուղի, կեանք ու շունչ՝ հողին,

Սոսեց ու ճշաց ձայնը մետաղի,

Եվ դիւղը խավար—ակը հույսերի—

Սրախը հանեց ճաճանչ լույսերի.

Մառախուղի պես ցրվեց հողս ու ցավ,

Կեանքը երգիչ էր, երգիչ էլ դարձավ...

VII

Եվ շարժվեց թափը վերաշինութեան—

Սակդժադործութեան.

Ես տեսա ինչպես ախտանը հաղթած

Կովի ճակատում

Աչքերում հուրը խանդավառութեան

Նոր կեանքն է կերտում.

Ինչպես ֆիդիսա, վոր բրիչ ձեռքին,

Շնչով հանձարի,

Ներշնչում էր կեանք իմաստ ու վոզի,

Անշունչ մարմարին՝

Այնպես էլ մարդը նոր Ատաված դարձած,

Նորեկ Աշխարհի—

Հողի էր շնչում հիվանդ ու մեռած,

Մեքենաներին:

Տեսա թէ ինչպես մուրճը վորոտուն,

Նա իր ձեռքն առած՝
 Ժանգոտ ու փթած բոլտերն է հատում,
 Թարախակալած,
 Մեխերը հանում շոգեվազերի,
 Վիրավոր կրծքից,
 Կարծես կռվի մեջ գնդակներ առած,
 Հերոսի վերքից:
 Օ, տեսա հիվանդ, հաշմանդամ դարձած,
 Շոգեկաթսաններ,
 Վորոնց աչքերից արցունքն էր կաթում-
 Նավթէ ակոսներ,
 Վորոնք անհամբեր սպասում էին
 Վիրաբույժերի
 Անդամահատող, հատու դանակի
 Փրկիչ զարկերին:
 Ապա թէ ինչպես հսկաները այն,
 Վերքերից բուժված,
 Ռեյլսերի-գծով, զվարթ սուլոցով,
 Սուրում են առաջ.
 Սուրում են ուրախ, հեզնում թշնամուն,
 Թափ ու շառաչով,
 Ու ծաղրում իրենց ավերիչներին,
 Խնդումի շաչով:
 Ես տեսա նրան—իմ հերոս եղբոր,
 Փլատակ հանքում,
 Զրախեղղ եղած մուխ երակների,

Զուրն է թիակում,
 վոր կեանքը նորից ամխահանքերում,
 Իր շնչով ապրի,
 Եւ վաղուց մարած ծխնելույղերի,
 Բոցերը վառի.
 Թեւեր էր առել եռանդը մարդու,
 Նման գերմարդու—
 Պեզաս էր դառել հուրը աչքերում,
 Ճաճանչով ցայտուն.
 Չէ՞ վոր մարդածին Աստվածներն են այն,
 Աշխարհիս համայն,
 վորոնք նոր ուղի, նոր-կեանքն են կերտում,
 Մարդկութեան համար.
 Ու երկաթուղին նոր կեանք ստացավ,
 Ինքն էլ երգիչ—երգեց ու անցավ...

VIII

Երկինքն այս տարի մի սքանչելի,
 Պարտիզպան դարձավ.
 Ամեն մի շաբաթ նա իր ցնցուղից,
 Անձրև էր մաղում,
 Մարդարիտներով դաշտերը ցողում:
 Ռանչպարն այս տարի աստվածային վեհ
 Հագի էր առել,
 Ու իր եռանդի ջահերը վառել,

Նա դաշտ էր հանել բահեր ու գութան,
 Հողն էր փորփորում ուժերով ախտան.

Վեր էր մագլցել առձիւի նման

Սեղ լերան կողեր,

Վնչ մի կտոր հող շեր ուզում անգամ

Անմշակ թողել.

Կառւրին անգամ նա սերմ էր ցանել

Ու միայն բերել

Անցած սով տարվա օրերը անել:

Մայր ու երեխա, հարս ու պառավ կին,

Հողի են շնչում հողի երակին.

Հողագործերի զենքերով զինված,

Կասեա թշնամու նրանք զեմ ելած

Կռիվ են մղում,

Կուրծքը լեռների, դաշտ ու ձորերի

Ակոսում, ճղում,

Քարի բերանից, օձի երակից

Հողաճումբ խրում.

Մարդը մի Աստված քարից էլ հիւթ է

Նա նիւթել ուղում,

Եվ առատութեան դրոշը հիւսում.

Չէ վոր մեծ սովը անցուցած տարին

Հարվածեց նրա տուն ու ամբարին,

Մային ու կային.

Սովի սարսափը նա չի մոռացել,

Տարերքը նրան Աստված է դարձրել:

8294
I

* * *

A

...Հասկերի մի ծով...

Հեղ ա գոհունակ ծանրացած բերքի

Գեղին ալիքով.

Արտերն այս տարի մեջք են խոնարհել —

Հասկով գեղնահեր,

Ու կարծես նրանք գոհ են տարերքից,

Վոր հաջողեցին իրենց մեծանալ

Ու փարթամանալ:

Այս ալիքներում գեղին սակեհուն,

Նուրբ հեղահամբոյր կն մի վեհութիւն.

Այս ծով գեղնապոյն արտերում հասուն

Իր ալիք բաշտվ աստվածն է խոտում

Ու ծովալ-ծածան ոլորում իր շուն.

Առատութիւնն է, առողջ հարսի պես

Իրեն է կանչում.

Եւ հաղթ զիւզացին արտի մեջ կանգնած,


Կարմիր արեւից այտերը այրված,

Գոհ է, երջանիկ, վորպես ինքն Աստված.

Չէ՞ վոր այս ամենն նրա համար է,

Վոր նվեր բերէ իր մեծ գավակին —

Կարմիր բանակին:



18190

IX

Ղարաքլիս գիւղից քաղաք են եկել
Սերգոն ու Մուքել

Ու Սափնարկոմի վզին պինդ շոքել,
Տվեք մեզ ելեքար-լուսի մեքենան,
Մենք էլ ենք ուզում ապրել ձեզ նման,
Մենք էլ ուզում ենք լույս տալ մեր գիւղին—
Մեր գոմին, հիւղին...

Գոմշէ սայլերով, վոնց ավար առած,
Հասել են տեղը Սերգոն ու Մուքել—
Հաղթանակ տարած.

Մոթորի համար հիմքեր են փորում,
Հուսափորութեան հուրը աչքերում,
Մեղուների պես աշխույժ ու տենդոս,
Մըջիւնների պես եռանդով փութկոտ
ելել են գործի Աստվածներն այն.
Վորը կիր ու քար, վորը մի գերան
Օձապտույտ խուլ արահետներով,
Անթափանցելի լերանց լանջերով,
Վարար գետերով,

ելեքար-կայանի նիւթերն են կրում,
Հիմքի քարերը երգելով շարում.
Եւ թշվառ գիւղում, ուր առաջներում
Մթին խավարի ջրերն էր հոսում՝

Այսոր ցերեկվա արեվի նման
 Ելեքարաշարժի ճաճանչն է խոսուամ,
 Ուր գինամոխի արագ պտույտից
 Մագնիսի կոկոն ծաղկունքն են բանում
 Եւ իր կարկաչուն

Ծափահարութեամբ՝ Նոր Աստվածներին—
 Այն խոհուն-զեղուն ստեղծողներին—
 Կեցցեաներ կոչում:

Այն գիւղի ձեթի ճրագներն անուժ,
 Վոր մի ժամանակ թախծում էին լուռ,
 Մրմնջով տխուր՝

Այսոր կախվել են ջահի շիթերով,
 Եւ կալ ու կանաչ, անտառ ու խրճիթ
 Վողողվել գոհար լույսի հույլերով:
 Խավարը երեկ—
 Գարձել է ցերեկ...

Հէյ ճակատներին Աստվածների այն
 Լույսեր են իջել Մովսիսանման.
 Բացվել է գիւղի աչքը մտքերի,
 Հոգին էլ քնար՝ ազատ երգերի.
 Հասկացել է գիւղն լույսի գորութիւն,
 Կեցցե՛ն Խորհուրդներն—իբր իշխանութիւն...

X

Ամայի դաշտում ծով տարածութեան մեջ
 Փշերի մի խիտ անտառ է բուսել,

Գեղջուկը տխուր խորհում է խեղճ-խեղճ,
 Վոր շունի նա հող—հողն ակոսէ...
 Հետու ներքեւում հրեն Արագվան
 Մանչում է դոռ առիւծի նման,
 Իսկ ինքը շունի մի առվակի ջուր,
 Վոր դոնէ այգին ազատի դաշտի
 Այրող երաշտից.

Ու գալարվում է մրրկի նման,
 Ուզում է անել նա արմատահան
 Անտառը փշի.
 Որոշում է վոր...

—Փշի անտառը պիտի արմատել
 Ու ջրանցքներով այն շրջապատել...
 Պոպան դաշտի մեջ ամբոխն է խոնովել
 Երկու սեռից էլ—հազարից ավել...
 Դիմել են ահա փոթորկի նման
 Վայրի հարձակման.

Ու Աստվածները վողեփորութեան
 Հուրը աչքերում,

Փշեա գորքի դեմ կռիվ են մղում...
 Երեկո է... էլ շկան փուշ ու թուփ,
 Դաշտը հայելի՝ ծով է ալեծուփ...
 Կանգնել եմ ափին մեծ կանաչների
 Սիրուն սուրակում,

Ջրերն են վազում խաղաղ հոսանքով,
 Նորածին դաշտը առատ վոռոզում,

Ջրերն են փազում, փոր հողն այսուհետ

Ապրի իր կեանքով:

Եվ փառք է տալիս Աստվածն Աստծուն,

Նմանը նմանին,

Վոր գիւղը սվեր եղեմ է դարձել

Մի հեքիաթային.

Եվ փառք է տալիս Աստվածն Աստծուն,—

Նմանը նմանին—

Վոր հուր եռանդով արհավիրքներին

Գարձրել է հլու.

Եվ փառք է տալիս Աստվածն Աստծուն

Նմանը նմանին,

Վոր այսորից հետ նա չի լինելու

Մոհտանջ թշնամուն:

Օ, գեղեցիկ է, ու գեղեցիկ է

Բնութիւնը մեր,

Եվ մարդը նրա Աստվածը անմեռ.

Մի մեծ ընդհանուր արհեստանոց է

Տիեզերքը մեր,

Եվ մարդը նրա հարաշարժ բեկռ.

Տարերքն իր ուժով հողի, ջրի տակ

Այսորից հետո մարդուն հպատակ.

Եվ թող ինչ մահվան դատապարտված է

Անցած օրերում

Այսոր մոխրանա համաշխարհային

Կրեմատորներում:

Եվ թող փառք լինի, փառք լինի մարդուն,
վոր հասկացել է կոլլեքտիվների

Անհատ զորութիւն.

Եվ թող այսօրից կեցցեն Սորհուրդներն

Իր իշխանութիւն:

Ուր կեանքն է պսուում՝

«Հաղթանք, հաղթութիւն»...

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Եվ Սորհուրդներում բազմել են անա
Երեկվա Սաքոն, Իվանն ու Թեդոն.

Հողաճումբի պես կոշտացած ձեռքեր,

Ակոսված դեմքեր,

Սոհուն ճակատով գետին են զարկել

Երեկվա իրենց բռնակալներին,

Իրենք նմանվել մեծ Աստվածներին:

Գործում է եռթնդը մոթորի նման

Նրանց արեան մեջ,

Եվ ամեն անգամ մարդու հոգու մեջ

Վե՛հ Աստվածային կայծը բորբոքում

Կրակով անշեջ

Ու կեանքը կերտում կարող վրձինով

Հանճարեղ վոզու:

Աճում են նրանք ու բարգավաճում

Կաղնիների պես և զարկ տալիս նոր

Կեանքի կառուցման:

Աստվածներն են այն,

Վորոնք ծնվեցին բանվորի արեան

Հիւթերից երկնած,

Նրանց մտքերի, նրանց վառ փոքու

Հույզերից տանջված:

Օ, գիտեմ, գիտեմ, հեռու շեն օրեր,

Մեծդ Աստվածներ,

Երբ այլ աստղերի վրայով ճամբա,

Ուղիներ քարած՝

Կառք հրաման մեր երկրագնդին

Այլ կերպ պտույտ գալ.

Երբ մեծ արեվից ջերմութիւն քամած՝

Հրաշքների նոր կը բանաք աշխարհ,

Նոր Աշխարհների նոր Սերունդներին

Լույս տալու համար...

Տիտան կովից հետ նրանք հաղթեցին,


Արդեւք ու խավար, երաշտ ու ծարավ

Ի շիք դարձուցին:

— Աստվածներն էին,

Այդպես կամեցան,

Այդպես խոսացին...





ԵՐԳԸ ՔԱՌԱԹԵՎ

(Ս.բձակ պոյեմ)

I

Հիտուն տարի է անցել այն օրից—ուղիղ լի կես
դար—երբ ես մի մանուկ ետթը տարեկան՝ ինձպես
տասնամյակի մանուկների հետ, առաջնորդութեամբ վար-
ժուհիների, խումբ-խմբի հետքից—կուռնիների շարք—
ձգտում էինք մենք քաղաքից էլ դուրս գեպի Չուլագի
դաշտերը այն լույս, լի ու բացութեա եւ խայտարղես
գառնուկների պես թավիշ խոտերը ծաղիկների հետ
ինամքով գրկած՝ կարմիր-զատիկիւ աղաւ օդի մեջ եւ
երգում էինք, եւ զնգում էինք

Հիտուն ձիգ տարի—ուղիղ լի կես դար սրանից
առաջ վարժուհիները շատ լաւ գիտեին, թէ որքան
կրթիչ եւ օգտակար է մեզ մանուկներին երկսեռ խմբ-
քով ընդարձակ դաշտը տանել հարիւրով, երգել ու
խայտալ աղաւ օդի մեջ աղաւ բնութեան, ուր պիտի
կտիվեր մեր միակցութեան ապագա շղթան:

Ե՛մ՝ գառնուկի պես ձերմակ մի մանուկ, ինքնա-
հաճ կամքով, այլ եւ բնութեամբ անհաշտին մեկը,

երգեցիկ խմբի հարիւրների մեջ միշտ ջանում էի մի
բանով դատուել ու գերազանցել իմ ընկերներին, այդ-
պէս էր արգեն մանուկ բնույթն իմ ըմբոստ ու մրցող:

Ու զլուծ էի արծաթ հնչիւնով ձայնս մանկական,
օճալա բարձր բոլոր միւս երգող մանուկ ձայներից,
վորոնց դարմանքը, վորոնց նախանձը շարժում ծիծա-
ղով ու զնգում նորից:

Հա... դուք ծիծաղում, ծաղրում էք երգս, նա-
խանձում ուժեղ ձայնիս էջերին... ու ես հերստա-
վում, խոտվում եմ ինքս ինձ, հետ մնում խմբից, տապ
անում մոտիկ բլրակի հետքին, իբր ջուր խմել ուզում
առվակից. ու արծաթ հնչիւն ձայնով մանկական ա-
վելի վառված երգում եմ մեծակ երգն իմ սիրած՝ «Ա-
զատն Աստված»:

Տեսնում եմ ինչպէս խումբը կանգ առավ վար-
ժուհու ձեռքի մի մեղմ շարժումով, ինչպէս վարժու-
հին վողջ ականջ դառավ եւ ուշքը լարեց դեպ բլրակի
ձոր, ուր ես թագնված քլքլան առվի քով, ինքս էլ մի
աղբիւր, քլքլում էի ու երգում էի. զգում, թէ ինչպէս
իմ ընկերները այն հարիւրեակի հիացքից ապշած հեռ-
հեռ են նայում, զրնգան ձայնիս ալիքներն օդում
փնտրում, վորոնում... ու մեկ էլ ահա բարի վարժու-
հին տեսնում եմ ինչպէս ինձ իր գիրկն առած, փոր-
րիկիս գրկած. ինչպէս գառնուկի՝ եւ համբուրում է,
եւ ջերմ գուրգուրում, խոտվածիս հետ խոսում, բըլ-
բըլում եւ այդպէս գրկած՝ հետ գառնում կրկին—նը-
րանց խառնում ինձ—այն հարիւրեակին—ինչպէս հո-
վիվր փախած գառնուկին:

II

Հեքիաթային էր պարզ մանկութիւնն իմ եւ յարկածալից պատանեկութիւնս .. Պարտիզում, այգում, դուրսը, դպրոցում երգով եմ ապրել, երգով էլ սնվել: Գարնան սիրենի թարմ պտուկները բացվելու ժամին, հողիս երգել է նրանց ճիթերի առաջին շնչի հետ. թավիչ խոտերի, ջրջրուկների կանաչը շոյել իմ երգը մանուկ, նրանց առաջին ժպիտի ժամին:

Պղտոր ու վազուկ դարձան ջրերի առունների հետ երգով է մրցել, ձուլվել իմ ձայնը պատանեկական. եւ կույսի կուրծքը բողբոջի նման, կոկոնի նման երբ դուրս է ցցվել կարմիր թավիչիա հադուստի տակից՝ առաջին անգամ ես եմ ողջունել այդ խենթ պայքարը իմ թարմ ու ջահել պայծառ երգերով:

Երգվում եմ ես ձեզ, մատաղ ընկերներ, մատաղ հասակի հարսեր ու կույսեր, մատաղ կրծքերից շատ հառաչներ են աղանջիս հասել, երանի ավել իմ անուշ ձայնին, իմ հնչիւն երգին դգացմունքով լի, բուրմունքներով լի—շատ էլ սփսսուել, վոր անմատչելի վայրենի եմ մի... է՛հ, թարմ ծաղիկին, բուրոյ ու սիրուն, էն ո՞վ չի սիրի...

Կամ ջահել սիրտը անբիծ, անաղարտ սիրելու կարոտ, սիրուց եռացող, անզուսպ խլրտող խենթ ու անարատ, արիւնը ջահել չէ՞ վորոնում է իրեն էլ ընկեր. փրփրող արիւն նոր ու անապակ, կարմիր գինու պես—էն ո՞վ չի սիրի...

Անո՛ւշ, ջահել ձայն թովիչ քնարի, ջերմութեամբ

լեցուն, զգացմունքների բույրերից թելած, հարկավ,
կըսիրեն...

Եվ ես չիմացա, ո՞վ վորքան սիրեց, ո՞վ վորքան
կարմրեց գաղտուկ սիրունքից, ո՞վ քանի գիշեր ան-
քուն անցրեց ու մնաց տանջված սիրո կրակից... Ես
միայն երգիչ եմ երգիչ էի... դեռ հոգով մանուկ եմ
անմասշեղի, ջահել վայրենի:

Չորագի կանաչ դաշտերը ծաղկոտ եմ այգիների
դառ ու վարդերը, մեր Մանաս զայա փայտէ ջաղացի
սրընթաց ջուրը, թոփշի գետերը եմ աղբիւրները լիա-
ցան արդեն մանուկ զքնգան երգող թռչնակի անհող
երգերից. վարդերի նման շուտ շառագունող, կրակ
բռնկող կույսի այտերը շատ կարմրեցին այրող ու վա-
ռող, խաբտանք աղբող պատանեակ ձայնից. էհ... սեր
էր էլի... ջահել պատանու ջահել աղջկա. երգս էլ մի
նետ, տվեց ու անցավ, մասաղ սրտերին մի խոց ու-
վելցավ. ջահել արիւնը վերք շատ է սիրում, վերք շատ
է սունում, խոցեր ստանում—շուտ էլ մոռանում...

III

Անցած մանկութիւն, պատանեկութիւն՝ հասավ
իմ օրը խոր գիտակցութեան, հզոր տոնական. խլր-
տաց իմ մեջ վառ մանկութիւնից խորացած վողին,
պատանեկութիւնից դտված իմ արիւն եմ երգս նորից,
նորից տարածվեց... Այս անգամ ո՞չ թէ հողին ու ջրին,
դաշտին, աղբիւրին ես նվիրեցի, ո՞չ էլ գարնան հետ
իմաստ ստացած արիւնը հող ու սեր վորոնող վար-
գարույր կույսին—այլ կեանքի առատ խնջույքներից
զուրկ շարքաշ բանավորին—կեանքի զինավորին:

Տեսնում էի ես սիրելուց նա գուրկ եմ արելից
 գուրկ, ամբողջ օրերով ծուխ ու մրի մեջ կեղտում շա-
 դախված՝ ժամանակ չունի արեւիին նայի, բնութեամբ
 հրճվի, ժամանակ չունի կնոջը նայի, զավակին գրկի,
 սիրի, փայփայի... այլ ամբողջ օրը մռայլ շենքերի,
 գործարանների կամարների տակ՝ թուջի, երկաթի,
 համառ սողապատի հետ է նա կռվում, վոր հաց վաս-
 տակի եմ ընտանիքը սովից սպասի...

Բիրտ գործատեղը այգալես է ուզել. բանվորը
 պիտի վողջ օրը բանի, վոր «գատարկ բանով» նա չը-
 դրադվի. բանվորը պիտի կիսաքաղց մնա, վոր նրա
 միտքը այլ հաճույքներից գերծ, ազատ մնա. նույնիսկ
 բնութեան գեղովը հրճվել կարող է միայն իր կինը
 շառլ, աղջիկը շվայտ... ու մեկ էլ ինքը ու իր բթա-
 միտ աղան ստահակ. իսկ բանվորը... ո՛չ. «սուրբ ա-
 նասունին» սվ տվեց այգքան գգալու շնորք...

Հո՛, ես գգացի անարդարութիւնն մարդկանց օ-
 բնքի եմ այն պժգալի նրանց կարգերի կազմը թու-
 նալի... Տարերքի հույզը, բնութիւնը հաղթ, մարդկա-
 յին ձայնը, արիւնը ջահել հույզեր են ծնում անհատի
 հողում...

Իմ մեջ մի՛ ձուրվեց անցեալի բոլոր ույժը խառ-
 ցած, ձիրքը հրաշունչ եմ հրարութի պես ժայթքեց իմ
 հողու լավան բողբոջ, խոսքը կործանող, երգը խիստ,
 դաժան՝ շանթ ու հուր ցանող...

Հարվածեց նա հենց առաջին անգամ հզոր իր
 շանթով պորտարույծների գոռ պալատներին եմ հըր-
 հըռալով տապալվեցին այն քարի պալատներ, ուր
 բույն էր գրել սարդի վոհմակը բիւր վոստայններով:

Ջարկեց նա վոսկուց ձուրված գահերին եմ խոր-

տակվեցին թագ ու պսակներ, թագ ու թագունին. ու մաքրեց հունը երգիս հոսանքի եվ այդ հոսանքում լայն ու ավերիչ գլորեց տարավ հատակը ծովի օղը վարակող տիղմը փոսերի ու ճահիճների:

Ու հասավ նրան երգս հաղթական այն մեծ չարքաշին, վորի անունն էր «գրաստ սրբազան»...

Ու հասավ երգս նրա ականջին...

Օ, նա Պարնասի Պեզասն է դարձել եվ մինչ այսօր էլ՝ նրա թռիչքին վոչ վոք չի հասել...

IV

Հիսուն լի տարի... ուղիղ կես դար է այն օրից անցել...

Այժմ թեև ձեր ու արծաթ թելերն են ժպտում քունքերիս—խորշումած ճակտիս փաթաթան դարձել՝ բայց էլի, էլի դեռ վոզով ջահել ես ձեր խոհերի, փոթորիկների երգիչն եմ կրկին, այսօր ալեվոր, իսկ վաղը դարձեալ ձեզ հետ թեւավոր:

Ճիշտ է, իմ թափը առաջվա նման էլ չէ զորավոր, թեվերիս գարկը—մկանունքների—այն ջահել օրի վեհ արծիվների թռիչքը չունի, ոչ էլ իմ երգը հորձանուտների, հարձակվող զորքի ռազմական վոզին, վորպես հոխորտող շաչող ջրվեժի, ջահել անտառի ճկուն, դիմացկուն խոյացող վոզի՝

Բայց էլի, էլի... տերեւաթափ ծառի ճղները ամուր, ոստերը ճկուն հիշեցնում են էն փառքը վաղեմի:

Բայց էլի, էլի հաստատուն հզոր կայուն լինելու նա մի երգ ունի, դառամած բնով, թեև ջլապինդ, գո-

սացած ճղնով, թեև հիւթալի՝ ծերացած կաղնին փոթորիկներին ու մրրիկներին ասելիք ունի:

Նորից դիմանում բուք ու բորանին եւլ դիմավորում կրծքով երկաթի խոլ տարերքներին եւլ այդ տարերքի, քառսի կովում իր երգը փորձված փոթորկի դիմաց նա նորից լարում:

Իմ մանուկ ընկեր—ապագա սերունդ—ջահել պատանեակ, եւլ դու իմ ընկեր, իմ եղբայր բանվոր, վոր վողջ լի կես դար կեանքս լի երգով ձեզ եմ նվիրել՝ կովով հավատով անլքուն ու քաջ՝ անվհատ քայլով դու էլ խոյացիր երթովդ առաջ:

Ծերուկ հասակի երգս էլ ընդունիր վորպես մի սնունդ ձկուն վոստերիդ, վորպես մի օրհնանք ջահել արեւիդ, ուր նա անարգել պիտի մեծանա, աճի, զարգարգանա ու փարթամանա փոթորկոզ կեանքի ահեղ մրրկին, այս կովի բեմում ինձպես դիմանա, հաղթանակների բովում ամրանա....

1922 թ.



(104.)

A $\frac{I}{8794}$

ԳՐԱՆԻՑ 10 ԿՈՒՆ. ԱՊՐԱՆԻՑ



Հ Յ Վ Ի Դ Ն Վ Յ Ի Զ Ո Յ Ն Ն

Ստանալու է Երևանի քաղաքի Կենտրոնական գրադարանից (Ստանալու է Երևանի քաղաքի Կենտրոնական գրադարանից) 117 հասցեի 2-րդ հարկից: